



ԱԶԱՏՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

SUSC Երևանի Կոթագիտական ինստիտուտի ֆինանսների,
հաշվառման և առողջության ամբիոնի ավագ դասախոս,
քաղաքական գիտությունների թեկնածու

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՒՄ

Ներդրումների հոսքը կախված է երկրի տնտեսական վիճակից և տնտեսության կայունության կանխատեսումներից լինուանկարից։ Ներդրումային որոշումները պայմանավորված են մի շարք գործուներով, որոնց շարքում կարևորվում է «քաղաքական ռիսկի» դերը։ Քաղաքական, տնտեսական, տցիալական անկայունության հավանականությունը հնարավեր ներդրումները կրարձնեն անշահավետ, քանզի բարձր է ներդրումների կորսուի, արժեգույնան վտանգը։ Հայաստանի Հանրապետությունը դիտարկվում է որպես ռիսկային պետություն, այդ թվում ըստ քաղաքական ռիսկերի։ Այստեղ քաղաքական ռիսկերի կարուցվածքը գնահատվել է վարկամիշային կազմակերպությունների, խոշոր ֆինանսական ինստիտուտների և անկախ վերլուծաբանների կողմից, բացահայտվել են որոշակի փոփոխություններ։ Հայաստանում քաղաքական ռիսկի գործոնների շարքն են դասվում կրոռուացիան, հովանավորությունը, խաղի կանոնները, տնտեսության վրա քաղաքականության ազդեցության աստիճանը, բյուրոկրատիան, աշխարհաքաղաքական հիմնախնդիրները և այլն։ Այսուամենայնիվ, քաղաքական ռիսկերը, որպես այլային, ոչ միշտ են «վախեցնում» ներդրողներին։ Գոյություն ունի գործիքակազմ, որը թույլ է տալիս արդյունավետ կառավարել ռիսկերը, եթե ռացիոնալ են սահմանված խաղի կանոնները։ <<ում անհրաժեշտ է ստեղծել քաղաքական ռիսկերի վերլուծության և կառավարման համակարգ ու հետագա քայլերն ուղղել ներդրումային միջավայրի որակի բարձրացնանք։

Հիմնարարեր. Ներդրումներ, քաղաքական ռիսկ, քաղաքական ռիսկերի կառավարում, ներդրումային վարկամիշ, ռիսկերի համընդիամրացում, պետության վարկամիշ, ներդրումային գրավություն, ներդրումային միջավայր, ռիսկի մակարդակ

Տնտեսության զարգացման ռազմավարական միջոցառումների համատեքստում անժխտելի նշանակություն ունեն քաղաքական ռիսկերը, որոնք անհրաժեշտ գործուներ են նաև ներդրումային քաղաքականություն մշակելիս: Զերնարկատիրական գործունեության ցանկացած ոլորտում ներդրումների քաղաքական ռիսկերի հավանականությունը միշտ էլ բարձր է, որը պայմանավորված է ինչպես տվյալ երկրում, այնպես էլ երկրից դուրս տեղի ունեցող քաղաքական իրավիճակների փոփոխություններով: Ըստ էության, յուրաքանչյուր ներդրող կրում է որոշակի ռիսկեր: Ոիսկը հնարավոր կորստի հավանականությունն է: Ներդրումային ռիսկը ներդրումների կորստի վտանգն է, դրանց ոչ լրիվ փոփոխառուցումը, ներդրումների արժեգրկումը:

Ա. Ուիլետի բնորոշմամբ ռիսկն օբյեկտիվ երևոյթ է, որը կոռելացվում է անցանկակի իրադարձության առաջ գալու սուբյեկտիվ ընկալման անորոշությամբ¹: Ինչ վերաբերում է քաղաքական ռիսկին, ապա մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարբեր մոտեցումներ: Այսպես՝ Վ. Վեստոնը և Բ. Սորտը դա սահմանում են որպես ազգային կառավարության այնպիսի գործողություններ, որոնք փոխում են համաձայնագրերի պայմանները, խոչընդոտում գործարարությանը, հանգեցնում օտարերկրյա ընկերությունների սեփականության բռնագրավմանը²: Դ. Ջոդիսի կարծիքով՝ քաղաքական ռիսկը օտարերկրյա ընկերությունների կողմից գործողությունների իրականացման պայմաններում փոփոխություններն են, որոնք ի հայտ են գալիս քաղաքական գործընթացների հետևանքով: Ս. Կոբրինը համարում է, որ քաղաքական ռիսկն այն անկանխատեսելի հանգամանքներն են, որոնք առաջանում են քաղաքական միջավայրում և հաճախ դրսնորվում են սահմանափակումների ձևով: Համաձայն մեկ այլ մեկնաբանության՝ քաղաքական ռիսկն երկրում քաղաքական գործունների առաջացման հավանականությունն է, որոնք կարող են բարենպաստ կամ բացասական ազդեցություն ունենալ կառավարչական, տնտեսական և գործունեության այլ տեսակների վրա: Այդպիսի քաղաքական գործուններից են, օրինակ՝ քաղաքական ռեժիմի կայունության մակարդակը, քաղաքական անկարգությունները (խռովությունները), կոռուպցիան, հանցագործությունները, գործագրկությունը³:

Զ. Քենեթին առաջարկում է քաղաքական ռիսկը բաժանել էքստրալեզալ (Էքստրաօրինական) և լեզալ-կառավարական (օրինական-կառավարական) ռիսկերի: Էքստրալեզալ ռիսկը այնպիսի իրադարձություն է, որի աղբյուրը գտնվում է երկրի առկա կառույցներից դուրս (ահարելքություն, սարոտած, հեղափոխություններ, ռազմական հեղաշրջում): Լեզալ-կառավարական ռիսկը ընթացիկ քաղաքական գործընթացի ուղղակի արդյունքն է և ներառում է այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են ժողովրդավարական ընտրությունները, որոնք սկիզբ են նոր կառավարության ձևավորման և օրենսդրական փոփոխությունների⁴:

Յուրաքանչյուր ներդրող որոշում ընդունելիս կարևորում է ինչպես քաղաքական և սոցիալական կայունության հեռանկարը երկրում, այնպես էլ

¹ Տե՛ս Willett A., The Economic Theory of Risk Insurance,- University of Pennsylvania Press. Philadelphia. 1951, էջ 6:

² Տե՛ս Weston V., Sorge B., International Management Finance. Homewood, 1972, էջ 5:

³ Տե՛ս Государственная политика и управление /Под ред. Сморгунова Л./. М., “Российская энциклопедия”, 2006, էջ 347: Kobrin S., Managing Political Risk Assesment:Strategic Response to Environmental Change. London, 1982:

⁴ Տե՛ս Kennedy C., Political Risk Management, 1987, էջ 7:

անկայունության հավանականությունը, որը հնարավոր ներդրումները կդարձնի անշահավետ: Քաղաքական ռիսկի ազդեցությունը ներդրողի եկամուտ ստանալու վրա կարող է լինել ուղղակի կամ անուղղակի: Այնուամենայնիվ, թյուր է այն կարծիքը, թե քաղաքական կայունության մակարդակն է միայն ներդրումների ռիսկի աղբյուր:

Ներդրումների ներգրավման և դրանց արդյունավետության ապահովման նպատակով ռիսկերի, մասնավորապես՝ քաղաքական ռիսկերի վերլուծության ու կառավարման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում քիչ են քննարկված, մինչդեռ դրանք արժանի են հասուկ ուշադրության, հատկապես նկատի ունենալով քաղաքական ռիսկերի կառավարման արդիականությունը:

Բարեփոխումների ուղին ընտրած Հայաստանի գարգացումը չի կարող լինել առանց արտաքին ռեսուրսների (հնարավորությունների) օգտագործման՝ օտարերկրյա ներդրումներ, տեխնոլոգիաների ներմուծում, որակավորված մասնագետների ներգրավում և այլն: Քաղաքական իշխանության կայունությունը և գործարարության արդյունավետությունը առաջին հերթին կախված են իրական և հնարավոր ռիսկերի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության առկայությունից: Քաղաքական ռիսկերը մեծ ազդեցություն են ունենում երկրի ներդրումային վարկանիշի ծավորման վրա՝ շանտեսելով դրանց ներգործությունը նաև հայրենական շուկայի գրավչության վրա:

Քաղաքական ռիսկերի կառավարման արդիականությունը պայմանավորված է նրանով, որ տեղի է ունենում ռիսկերի համընդիանրացում: Ժամանակի ընթացքում քաղաքական ռիսկերը փոխում են իրենց բնույթը. մի մասը դադարում է արդիական լինելուց, և հակառակը:

Համաշխարհային գարգացումները քաղաքականության և տնտեսության մեջ փոխեցին խաղի կանոնները: Ժամանակակից աշխարհում սոցիալ-տնտեսական հարցերը լուծվում են «քաղաքականության քողի» ներքո՝ հաշվի առնելով պետությունների քաղաքական կշիռը: Այս մրցապայքարում նրանք աշխատում են չկորցնել իրենց քաղաքական առավելությունները, և շատ հաճախ որպես գործիք կիրառվում է ներդրողների «մուտքի և ելքի» սպառնալիքը (ներթափանցումը): Ինչպես մյուս երկրները, Հայաստանի Հանրապետությունը նույնպես նման պայմաններին՝ դոնոր պետությունների կողմից սահմանված խաղի կանոններին հարմարվելու խնդիր ունի, և այդ կարողությունն էլ պայմանավորում է գարգացման արդյունավետությունը:

Ներդրումների ներգրավման քաղաքականությունն իրագործելիս կարևորվում է «պետության վարկանիշ» հասկացությունը, ինչն, ըստ էության, պետության արտաքին և ներքին քաղաքականության գնահատականն է միջազգային ասպարեզում: Յուրաքանչյուր գործողություն պետք է ուղղված լինի ներդրումային գրավչության մեծացմանը, քանզի ներդրումները աճի ապահովման կատալիզատոր են:

Տնտեսության գարգացման կարևորագույն պայմանն է նաև ներդրումային միջավայրը: Որպես ռիսկի գործոն կարելի է համարել ներդրումային միջավայրի թափանցիկությունը և կառավարելիությունը, որը լրացնելու համար: Ցանկացած փոփոխություն քաղաքական գործընթացում, ինչպես նաև այդ փոփոխությունների հաճախականությունը սոցիալ-տնտեսական ոլորտում առաջ են բերում անորոշություն, անկանխատեսելիություն, այսինքն՝ ուժեղանում է քաղաքական ռիսկը:

Ընդհանուր առնամբ, քաղաքական ռիսկը ներառում է այն անբարենպաստ իրադարձությունները, գործողությունները, դրանց հետևանքները, որոնք տեղի են ունենում անորոշության պայմաններում իրականացված քաղաքական որոշումների արդյունքում: Քաղաքական ռիսկը կարող է պայմանավորված լինել մի շարք գործուններով: Դրանք, ըստ բովանդակության (խմբերի), ներկայացնենք այսուսակ 1-ում:

Քաղաքական ռիսկին հատուկ է ինչպես կոլեկտիվ բնույթը՝ պայմանավորված խմբային քաղաքական շահերով, այնպես էլ սուբյեկտիվ բնույթը՝ կախված սուբյեկտիվ ընկալումից և մեկնությունից: Դա կարող է հանդես գալ իբրև ինքնուրույն ռիսկ կամ էլ բխել ռիսկի այլ տարատեսակներից: Քաղաքական ռիսկը սոցիալ-քաղաքական միջավայրում դրսնորվում է «թաքնված ծևով, ոչ ակնհայտ», ուստի իբրև բացահայտող ախտանիշներ կարելի է առանձնացնել հասարակական անկարգությունների մակարդակը, կառավարության կայունությունը, քաղաքական բազմակարծությունը, էթնիկ և կրոնական հակասությունները, կոռուպցիան, ազգայնամոլությունը, հակասահմանադրական միջոցառումները և սոցիալական բախումները:

Աղյուսակ 1

Քաղաքական ռիսկեր առաջացնող գործուններն ըստ բովանդակության

Գործուններն ըստ բովանդակության/խմբերի	Քաղաքական ռիսկը պայմանավորող գործունները
Տնտեսական	Ծանր տնտեսական իրավիճակը, բարեփոխումներ իրականացնելու նպատակով դրամական միջոցների, զարգացած և կայուն ենթակառուցվածքների, տնտեսական ծրագրերի բացակայությունը և այլն
Սոցիալական	Գործազրկությունը, չլուծված այլ սոցիալական խնդիրներ, կոլեկտիվի շահերի անտեսումը և այլն
Քաղաքական	Քաղաքական իրավիճակների վերլուծության բացակայությունը կամ անկարողությունը, իշխանության ոչ համարժեք արձագանքը, քաղաքական այլ սուբյեկտների շահերի անտեսումը, իրավանացվող քաղաքական կուրսի անկայունությունը, քաղաքական ինստիտուտների կարգավիճակը, իրականացվող քաղաքականության նկատմամբ ժողովրդի աջակցության բացակայությունը կամ մասնակի օժանդակությունը, էթնիկ քաղաքական բախումները, քաղաքական գործի անձնական հատկանիշները, վարքը, իիվանդությունը, իրաժարականը և այլն
Իրավական	Իրավական և քարոյական նիհիլիզմի արկայությունը, օրենքի խախտման դեպքերը, կոռուպցիան, իրավական նորմերի ընդունումը և այլն
Տեղեկատվական	Տեղեկատվության բացակայությունը կամ ոչ բավարար լինելը և այլն
Պատահական	Պատահականությունը, դժբախտ դեպքերը, բնական աղետները, վտանգ ու սպառնալիք ստեղծող իրադարձությունները և այլն
Այլ	Ոիսկին հակվածությունը և այլն

Հայաստանի Հանրապետությունը, մեր դիտարկումներով, դեռևս բավարար չափով ներդրողների ուշադրության դիտակետում չի գտնվում որպես զրավիչ երկիր: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այսպես՝ մեր երկիրը դասվում է ռիսկային երկրների շարք, որը բացատրվում է տարածաշրջանում պատերազմի հավանականությամբ, բացի դրանից կան նաև քաղաքական բնույթի ռիսկեր՝ կապված խաղաղության պահպանման խնդիրների հետ, որն էլ առաջացնում է ներդրումների անբարենպաստ միջավայր: Նման իրավիճակը խոչընդոտում է երկարաժամկետ ներդրումների կատարմանը:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ռիսկի վերլուծությունը առանձնահատուկ է նաև նրանով, որ ժողովրդավարական ինստիտուտները դեռևս կայացնան փուլում են, և զարգացումների բեկումնային բնույթը հաճախ պայմանավորվում է մարդկային գործոնով, ինչը կարևորվում է քաղաքական ռիսկի վարկանիշային գնահատման դեպքում: Զարգացող երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, քաղաքական համակարգի կայունությունը կարևոր նշանակություն ունի ներդրումային գրավչության ընդհանուր գնահատականը որոշելիս: Ուստի ներդրողները հատուկ ուշադրություն են դարձնում միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից տրված գնահատականներին:

Քննարկված տեսակետների, միջազգային կազմակերպությունների վերլուծությունների հիման վրա Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ռիսկի գործոններից կարելի է առանձնացնել հետևյալները՝ սառեցված բախումնային հարաբերությունը, փակ սահմանները հարևան երկրների հետ, կենտրոնացվածության աստիճանը, խոշոր ներդրումների ծայրահեղ մենաշնորհների առկայությունը, աշխարհաքաղաքական դիրքը, վարչարարությունը, խաղի կանոնները, պետական հատվածի անորոշությունը, ոչ թափանցիկությունը, անկայունությունը, բյուրոկրատիզմը, սոցիալական լարվածությունը, ստեղծված պատկերացումները, կարծրատիպերը, տնտեսության մեջ պետության միջամտության աստիճանը, կադրային վերադասավորումները, ընդդիմության հակագեցությունը, սոցիալական լարվածությունը, հարկային օրենսդրության պարերական փոփոխությունները, գործադրկությունը և այլն:

Կարկանիշային տարրեր կազմակերպությունների ներկայացած համաթվերով Հայաստանը տարրեր դիրքեր է գրավում: Այդպիսի գնահատականներն ընդգծում են ներդրողների համար երկրում առկա խնդիրները: Կազմակերպությունների կողմից տրված ընդհանրական ցուցանիշները ներկայացված են այլուսակ 2-ում:

Քաղաքական ռիսկերի «փաթեթում», որպես << մրցակցային դաշտի բարելավմանը խոչընդոտող, թույլ և խնդրահարույց գործոններ, Վարկանիշային կազմակերպությունների մեծ մասը հիմնականում առանձնացնում է ոչ բավարար անկախությունը, անարդյունավետ և կոռումպացված դատական համակարգը, ոստիկանական ծառայության անհուսալիությունը, անօրինական վճարները և կոռուպցիան, կաշառակերությունը, անարդյունավետ պայքարը բացասական երևույթների դեմ, կառավարության անարդյունավետ վարչարարությունը, պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը, ծախսումների շռայլումը, մտավոր, մասնավոր սեփականության, ներդրողների թույլ պաշտպանվածությունը, «հովանավորչության» ազդեցությունը պետական այրեղի վճիռների վրա, քաղաքական գործիչների նկատմամբ հանրության անվստահությունը, երկրի ինքնավարության վարկանիշը, ազգային խնայողու-

թյունների մակարդակը, մաքսային գործընթացների բեռը, հարկային բեռի տեսակարար աճը՝ ՀՆԱ-ում, տեղական մրցակցության ինտենսիվությունը, անբարեխիղծ մրցակցությունը, շուկայում գերիշխանությունը, մենաշնորհային բարձր մակարդակը, փակ շուկայի առևայությունը, զնամքը, հակամենացնորհային քաղաքականության անարդյունավետությունը, սահմանափակ օտարերկրյա ներդրումները և դրանք լրջորեն խոշընդունող բյուջերատական արգելքները, արժուային կարգավորումը, բներացված բնակչությունը, եկամուտների անհավասարությունը, աղքատության մակարդակը, տնտեսական զարգացման սահմանափակ հնարավորությունները, ածող արտաքին և տնտեսության զգալի խոցելիությունը, երկրի տնտեսական աճի ոչ հստակ հեռանկարը, պետական պարտքի զգալի խոցելիությունը փոխարժեքի արժեգույն ռիսկից, եկամուտների հավաքագրման ցածր մակարդակը, աշխարհաքաղական միջավայրը և այլն⁵:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Հայաստանում քաղաքական ռիսկի մակարդակը «չափավորի» կամ «միջինի» սահմաններում է, սակայն կոռուպցիայի և այլ գործունների առումով դեռևս լուրջ արդյունքներ չեն արձանագրվում: Սուբյեկտիվ գնահատականներին զուգահեռ, երկիրը բախվում է նաև մեկ այլ խնդրի: Իրավիճակի ընկալումը ներդրողների կողմից, որը ներդրումային միջավայրի ծևակվորման գործուններից է: Այդպիսի գործոն կարելի է համարել նաև պետության մրցունակությունը և դրա սուբյեկտիվ գնահատականները մասնագիտացված կառույցների և գործակալությունների կողմից: Քաղաքական ռիսկերն ազդում են ներդրումային միջավայրի որակի, հետևաբար՝ երկրի գրավչության վրա, իսկ ներդրողների վարքագիծը կախված է ոչ այնքան քաղաքական ռիսկերի իրական մակարդակից, որքան դրանց գնահատականից: Կոռուպցիայից բխող քաղաքական, տնտեսական և սոցիալական հետևանքները չեզոքացնում են առկա քաղաքական համակարգի, պետական կառույցների նկատմամբ վստահությունն ընդհանրապես, որն էլ խաթարում է բարեկիխումների ընթացքը:

Մեր երկրում ներդրումների ներգրավման միջոցառումներն ուղղված են մակրոտնտեսական կայունության ապահովմանը, օրենսդրական բարեփոխումների իրականացմանը, ենթակառուցվածքների կազմավորմանը, մարդկային ներուժի զարգացմանը, որոնք անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայ-

⁵ Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2014-2015 թթ. ինդեքս»: Աղյուրը՝ <http://www3.weforum.org/docs/GCR2014-15/Armenia.pdf>, http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2014-15.pdf, <http://www.weforum.org/reports/global-competitiveness-report-2014-2015>, <http://www3.weforum.org/docs/GCR2014-15/Armenia.pdf>; «Երիքից» հիմնադրամի «Տնտեսական ազատության ինդեքս-2015»: Աղյուրը՝ <http://www.heritage.org/index/ranking.aspx>, <http://www.heritage.org/index/country/armenia?ac=1>, <http://www.heritage.org/index/country/armenia>; ՀԲ և ՄՖԿ «Գործարարությամբ զրավվելու ոյուրնությունը»: Աղյուրը՝ <http://doingbusiness.org/reports/global-reports/doing-business-2015>, <http://doingbusiness.org/data/exploreconomies/armenia#>, Ֆրիդուն Հանիկ «Ազատությունն աշխարհում 2015 թ.»: Աղյուրը՝ Freedom in the World 2015, https://freedomhouse.org/sites/default/files/01152015_FIW_2015_final.pdf, https://freedomhouse.org/report/freedom-world/2014/armenia#.VM5y_2iUcuw, Բերթելսման հիմնադրամի «Տրանսֆորմացիայի ինդեքս»: Աղյուրը՝ <http://www.bti-project.org/index/>, <http://www.bti-project.org/reports/country-reports/pse/arm>, <http://www.bti-project.org/fileadmin/Inhalte/reports/2014/pdf/BTI%202014%20Armenia.pdf>, «Սուլիդ» վարկանիշային կազմակերպություն: Աղյուրը՝ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Moody's_January%202015.pdf; «Ֆիჩ» միջազգային վարկանիշային կազմակերպություն: Աղյուրը՝ https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Fitch_January%202015.pdf, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Fitch_July%202015.pdf

մաններ են, քանի որ ներդրումների արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները չպետք է դիտարկել քաղաքական գործններից անջատ: Ապահովելով որոշակի աճ՝ տնտեսության խնայողությունները դեռևս չեն կարող համարվել ներդրումների ծավալի և տնտեսական աճի ներքին կայուն, հուսալի աղբյուրների ձևավորման միջոցներ ու բավարար չեն նպատակների, ծրագրերի իրագործման համար: Հատկանշական է, որ օտարերկրյա ներդրումներն ուղղվել են տրանսպորտի, էներգետիկայի, հեռահաղործակցության և կապի, գունավոր մետալուրգիայի, հանքագործության, սննդի վերամշակման, շինարարության, առևտուրի և սպասարկման ոլորտներ: Ընդունելով, որ տնտեսության զարգացումը կախված է իրականացվող ներդրումներից և ձիշտ կառուցվածքային, Ենթակառուցվածքային արդյունավետ փոփոխություններից՝ պետք է գերակա համարել այն ձյուղերը, որոնց զարգացման համար առկա են բավարար ռեսուրսներ ու մրցակցային ներուժ:

Տնտեսության ակտիվացման նպատակով մինչ այժմ իրականացվող ներդրումային քաղաքականությունը բարձր ցուցանիշներ չի արձանագրել (ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասաբար է ազդել տնտեսության վրա՝ առաջ բերելով սոցիալական լարվածություն): Առկա իրավիճակը փաստում է, որ Հայաստանն իր ներդրումային գրավչությամբ չի իրապուրում ներդրողներին: Ըստ Ի. Չիխարեկի՝ ժամանակակից ճգնաժամը աշխարհակառավարման ճգնաժամ է, երբ քաղաքական գործընթացները կանխորոշում են հասարակական կյանքի բոլոր մյուս բնագավառների հետագա զարգացումը, ինչն առանց ներդրումների անհնար է ապահովել⁶: Ուստի այժմնական է ներդրումային հնարավորությունների օգտագործումը: Ներդրումների ապահովման հետագա ընթացքը կախված է քաղաքական ռիսկի փոփոխական գործոնների բնույթից:

Քաղաքական ռիսկերը հնարավոր է կառավարել արդյունավետ գործիքազնով (լոբբիզմ, կապիտալում պետության մասնակցություն), եթե արդյունավետ և նպատակային են խաղի սահմանված կանոնները, կատարվող քայլերը: Այս դեպքում ռիսկը հանդես կգա որպես հեռանկարում դրական արդյունք ակնկալելու հնարավորություն: Զ. Բյուկենենի կարծիքով՝ «Լավ խաղն ավելի շատ կախված է լավ կանոններից, քան լավ խաղացողներից»⁷:

Պետությունը նախևառաջ անտր է լրացուցիչ երաշխիքներ տրամադրի ներդրողներին՝ ուղղված նրանց շահերի պաշտպանությանը, ինչպես նաև մշակի հնարավոր ռիսկերից ապահովագրելու համակարգ: Ոիսկի կառավարումը պահանջում է որոշել տեղի ունեցող իրադարձությունների հավանականությունը, կորստի չափերը, տալ քանակական գնահատական: Ոիսկերի կառավարման համակարգի վերլուծության դեպքում նպատակահարմար է ցուցաբերել համակարգային մուտեցում՝ բացահայտելով իիմնախնդիրների հնարավոր աղբյուրները որպես մեթոդաբանական գործիք: Քաղաքական ռիսկի օպտիմալացման մի շարք մեթոդներ են մշակվել, որոնք իիմնականում տարբերակվում են իրեն քանակական և որակական: Առավել օպտիմալ տարբերակ է այս երկու տեսակների համակցումն ըստ վիճակագրության և փորձագիտական վերլուծության: Ուստի անհրաժեշտ է (թեև ուշացած) ՀՀ-ում ստեղծել քաղաքական ռիսկերի վերլուծության և կառավարման համակարգ՝ նպատակառողված ներդրումային միջավայրի որակի բարելավմանը:

⁶ Տե՛ս Գосподин кризис, как Вас теперь называть? / Политические исследования, № 3, 2009, էջ 11:

⁷ **Мильчакова Н.**, Игра по правилам: "Общественный договор" Джеймса Бьюкенена, "Вопросы экономики", 1994, № 6, с. 114.

Աղյուսակ 2

ՀՀ ռիդբն ըստ քաղաքական ռիսկերի վարկանիշային համաթվերի (2013–2015 թթ.)

Վարկանիշային կազմակերպություններ և գելույցներ	2015				2014				2013				
	Դամաթիւ	Դաշտավայրի վրա կազմակերպությունների դրվագը	Եղանակած ընտրություն	Եղանակած ընտրություն	Դամաթիւ	Դաշտավայրի վրա կազմակերպությունների դրվագը	Եղանակած ընտրություն	Դամաթիւ	Դաշտավայրի վրա կազմակերպությունների դրվագը	Եղանակած ընտրություն	Դամաթիւ	Դաշտավայրի վրա կազմակերպությունների դրվագը	
Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության համարիվ» ^ա /միավոր/	4.01	85/ 144	Երկրորդ փուլ՝ արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում գտնվող երկիր՝ արտադրական գործընթացների կազմակերպման արդյունավետության և բարձրորակ արտադրանքի բողոքնան կարևորության մեջացում	4.10	79/148			Ուսուլարի վրա հիմնված զարգացման փուլից դեպի հաջորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլ անցնող երկիր /անցման շրջան/. հետընթացի գրանցում	4.02	82/144			Անցում զարգացման որակական նոր՝ Երկրորդ փուլ. արդյունավետության և նորարարական ունակությունների վրա ազդող գործոնների կարևորության մեջացում
«Թրանսվերենսի ինտեր-նեյշն» կազմակերպության «Կոռուպցիայի ընկալման համարիվ» ^բ	-	-	-	37	94- 99/175	-		36	94- 101/177	-			
«Յերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության համարիվ» ^գ , այդ թվում %՝	67.1	52/ 178	Չափավոր ազատ /Moderately free/ /69.9-60/	68.9	41/178	Չափավոր ազատ /Moderately free/ /69.9-60/		69.4	38/177	Չափավոր ազատ /Moderately free/ /69.9-60/			
Կոռուպցիայից ազատության ցուցանիշ /համաշխ. միջինը՝ 41.9/	36	95/178		26.7	124/178			26	127/177				
Մերդումների ազատության ցուցանիշ	75	36/178		70	46/178			75	27/177				
գործարարության ազատության ցուցանիշ	82.7	25/178		83.1	27/178			87.6	20/177				

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսա- կան կորպորացիայի «Գոր- ծարարությամբ զբաղվելու դյուրինությունը»^ո (%)	70.6	45/189			69.31	49/189			- /69.7/	40/185		
Ֆրիդրիմ Յանզի «Ազատու- թյունն աշխարհում»^ե, այդ թվում՝ քաղաքական իրավունքների քաղաքացիական ազատությունների	4.5	-	Մասնակի ազատ (Partly Free)	4.5	-	Մասնակի ազատ (Partly Free)	4.5	-	Մասնակի ազատ (Partly Free)			
Ֆրիդրիմ Յանզի «Ազգերն անցումային փուլում»^ե/ /ռողովորդավարության համախառն համարիվ/^թ	5.36	21/29	Կիսահամախմբված միահեծան (ավտորիտար) ռեժիմ (Semi- Consolidated Authoritarian Regime)	5.36	21/29	Կիսահամախմբված միահե- ծան ռեժիմ (Semi-Consoli- dated Authoritarian Regime)	5.36	21/29	Կիսահամախմբված միահե- ծան ռեժիմ (Semi-Consoli- dated Authoritarian Regime)			
ՏՅԴԿ՝ Երկրի ռիսկի դասա- կարգման գնահատական^է	6	120- 146/201		6	117- 147/201				123- 149/201			
Բերթելսման հիմնադրամի «Տրանժիոնալացիայի համարիվ»^ո												
Կարգավիճակի համարիվ	-	-		5.71	62/129	3-րդ կատեգորիա՝ «սահմա- նափակ» զարգացում ունե- ցող երկիր (Limited)- ժողովոր- դական զարգացումներով՝ 4-րդ տեսակ. «չափավոր հիքնակ- ալություն» (Moderate Autocracies), շուկայական տնտեսության զարգացումնե- րով՝ 3-րդ տեսակ. «թերի գոր- ծող» (Functional Flaws) շուկա- յական տնտեսության երկիր	-	-	-			
Կառավարման համարիվ	-	-		4.84	69/129	3-րդ տեսակ՝ քաղաքական կառավարման «չափավոր» որակ ունեցող երկիր (Mode- rate) և փոխակերպման գործ- ընթացների կառավարման	-	-	-			

«նվազագույն» բարդությամբ երկիր (Minor)

- ս «Համաշխարհային մոցունակության 2014–2015 թթ., 2013–2014 թթ., 2012–2013 թթ. համարիվ», /1-7 սանդղակում/: Աղյուրը՝ The Global Competitiveness Report 2014–2015, <http://www3.weforum.org/docs/GCR2014-15/Armenia.pdf>, http://www3.weforum.org/docs/WEF_GlobalCompetitivenessReport_2014-15.pdf, <http://www.weforum.org/reports/global-competitiveness-report-2014-2015>, <http://www3.weforum.org/docs/GCR2014-15/Armenia.pdf>
- բ «Վկայում է պետական հատկածում առկա կոռուպցիայի ընկածման մակարդակի» (կոռուպցիավառության մակարդակի) մասին, որպես բաղադրյալ հներքու չափովում է 0-100 միջակայքում, որտեղ 0-ն ցույց է տասին կոռուպցիայի բարձր մակարդակը երկրում, իսկ 100-ը՝ համապատասխանում է կոռուպցիայից գերք երկրներին: Հայաստանը գրավում է, համապատասխանաբար՝ 94-99-րդ հրկղոնականները, 175, 94-101-րդ տեղերը 177 երկրների շարքում բարեւավելով իր դիրքերը: Աղյուրը՝ http://files.transparency.org/content/download/1856/12434/file/2014_CPIBrochure_EN.pdf: http://files.transparency.org/content/download/1857/12438/file/CPI2014_DataBundle.zip, http://www.transparency.org/cpi2014/in_detail, <http://www.transparency.org/cpi2014/results>, www.cba.am
- ս Մեր երկրի 2015 թ. տնտեսական ազատության ընդհանուրական գնահատականը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 1.8 միավորով: Կիրառվում է 0-100%: Հայաստանը Եվրոպայի 43 երկրների շարքում 23-րդն է: Աղյուրը՝ <http://www.heritage.org/index/ranking.aspx>, <http://www.heritage.org/index/country/armenia?ac=1>, <http://www.heritage.org/index/country/armenia>
- ս «Գործարարությամբ գրադարձու դյուրինություն» համարին իր շրջանակներու սահմանափակ բնույթը է կրում, քանզի չի գնահատում գործարար միջավայրի բոլոր կողմերը իսկու կարևոր ներդրությունի համար /օդինական/՝ ենթակառուցվածքների որակը, սեփականության անվտանգությունը, տնտեսության հասանելիությունը, մակրոտնտեսական իրավիճակը և այլն/։ Աղյուրը՝ <http://doingbusiness.org/reports/global-reports/doing-business-2015>, <http://doingbusiness.org/data/explorereconomies/armenia#>, [http://doingbusiness.org/data/explorereconomies/armenia#](http://doingbusiness.org/data/explorereconomies/~/media/giawb/doings%20business/documents/profiles/country/ARM.pdf), www.cba.am <http://doingbusiness.org/~/media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB15-Full-Report.pdf>
- ս «Նետազոտությունը ներկայացնում է աշխարհի 195 երկրում քաղաքական իրավունքների և քաղաքահական ազատությունների» համարվոր գնահատականը են առանձին-առանձին, ապա հաշվարկվում է «Ազատությունն աշխարհում» մեկ միամական (միշհօ) համարիվ: Աղյուրը՝ Freedom in the World 2015, https://freedomhouse.org/sites/default/files/01152015_FIW_2015_final.pdf, https://freedomhouse.org/report/freedom-world/2014/armenia#.VM5y_2iUcuw, <http://www.freedomhouse.org/sites/default/files/FIW%202013%20Booklet.pdf>
- ս Nations in Transit տարեկան հետազոտությունը նաևկին կոմունիտարական 29 պետությունների համեմատական, ընդգրկում և բազմաչափ վերլուծությունն է ներկայացնելով ժողովրդավարության առաջընթացի հներքմ այդ երկրներու: Ի դեպ, «Կոռուպցիայի մակարդակի» գնահատականու (5.25 միավոր) Հայաստանը գրադարձնում է 18-րդ տեղը: Աղյուրը՝ https://freedomhouse.org/sites/default/files/NIT2015_Armenia.pdf, <https://freedomhouse.org/report/nations-transit/2015/armenia>, https://freedomhouse.org/search/nations%20in%20transit%202014#.VMS_cW1Ucuw, https://freedomhouse.org/sites/default/files/Methodology_Proof1.pdf, <https://freedomhouse.org/report/nations-transit/2014/armenia#.VM6BpGiUcuw>, <https://freedomhouse.org/sites/default/files/FH%20graphics%20final.pdf>
- ս Տնտեսական համագրծակցության և զարգացման կազմակերպությունն իր հետազոտական աշխատանքների շրջանակներում երկրները դասակարգում է օսս ռիսկայության 8 տեսակների, ընդ որում՝ ամենաբարձր քաղաքական և վարկի չվճարման ռիսկ ունեցող երկրները դասվում են 7-րդ, ամենացածր ռիսկի մակարդակ ունեցողները 1-ին տեսակին, իսկ բարձր եկամուտը ունեցող առանձին երկրները դասվում են «Օ ռիսկային տեսակին»: Համաձայն S724 մերուաբանության Հայաստանը 1999–2005 թթ. դասվել է 7-րդ ամենաբարձր քաղաքական և վարկի չվճարադանան ռիսկ ունեցող երկրների շաբաթը, իսկ 2006–2015 թթ. 6-րդ տեսակների շաբաթը՝ բարեւավելով իր դիրքը 1 աստիճանով: 2015 թ. գնահատականներով Հայաստանը աշխարհի 201 երկրների շաբաթը 120–146-րդ տեղերի սահմաններում է 26 այլ երկրների հետ: Աղյուրը՝ <http://www.oecd.org/tad/xcred/cre-crc-current-english.pdf>, <http://www.oecd.org/trade/xcred/crc.htm>, <http://www.oecd.org/tad/xcred/cre-crc-historical-internet-english.pdf>, <http://www.oecd.org/tad/xcred/cre-crc-current-english.pdf>, www.cba.am
- ս 2014 թ. գերմանական Bertelsmann Stiftung-ը հրապարակել է «Տրանսֆորմացիայի / փոխակերպումների / համարի -2014» գեկոյցը /այս համարիվ գնահատվում է 2 տարին մեկ անգամ/։ BTI-ն վերլուծում և գնահատում է ժողովրդավարության, շուկայական տնտեսության ու քաղաքական կառավարման դրակը 129 գարգացող և անցուային տնտեսությանը երկրներում: Ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման մակարդակի գնահատման համար կիրավովու ցուցանիշները միշհորված են 2 ներ խմբներում: «Կարգավիճակի համարիվ» (Status Index) /2012 թ.՝ 66/128/ /ներառում է 2 ենթահամարիվ՝ «Կառավարման բարության մակարդակը» և «Կառավարման կարողություն /ունակություն/», որը գնահատում է երկրում քաղաքական կառավարման որակը: Ի դեպ, Բերեթեմանի հիմնադրամը Հայաստանի քաղաքական հանձնարգը 2013 թ. հունվարի 31-ի դրույթամբ բնորոշել է որպես «ինքնակարգություն»: Աղյուրը՝ <http://www.bti-project.org/index/>, <http://www.bti-project.org/reports/country-reports/pse/arm>, <http://www.bti-project.org/fileadmin/Inhalte/reports/2014/pdf/BTI%202014%20Armenia.pdf>, https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BTI_2014.pdf

АЗАТУИ БАРСЕГЯН

Старший преподаватель кафедры "Финансов, учета и аудита"
Ереванского учебно-научного института ТНЭУ,
кандидат политических наук

Политические риски инвестиций в РА. – Приток инвестиций в экономику любой страны зависит от ее экономического состояния и прогнозов стабильности экономики. Инвестиционные решения зависят от ряда факторов, среди которых особую роль играет фактор "политического риска". Вероятность политической, экономической и социальной нестабильности делает невыгодными возможные инвестиции, т.к. слишком высок риск потери, девальвации инвестиций. РА рассматривается как государство с повышенным уровнем странового риска. Структура политических рисков в РА была оценена рейтинговыми агентствами, крупными финансовыми институтами и независимыми аналитиками, которые выявили определенные изменения. К числу политических факторов риска в Армении можно отнести коррупцию, протекционизм, правила игры, степень влияния политики на экономику, бюрократизм, геополитические проблемы и т.д. Тем не менее, политические риски не всегда отпугивают инвесторов. Существует целый набор инструментов, позволяющих эффективно ими управлять, но при условии рационального распределения правил игры. В РА необходимо создать систему анализа и управления политическими рисками и предпринять дальнейшие шаги для повышения качества инвестиционного климата.

Ключевые слова: инвестиции, политический риск, управление политическими рисками, инвестиционный рейтинг, глобализация рисков, рейтинг государства, инвестиционная привлекательность, инвестиционный климат, уровень риска.

AZATUHI BARSEGHYAN

Senior Lecturer at the Department of "Finance, Accounting and Audit"
TNEU Scientific Educational Centre in Yerevan
PhD in Political Sciences

Political Risks of Investments in the RA. – The inflow of investments in the economy of any country depends on the economic conditions and forecasts, the stability of its economy. Investment decisions depend on a number of factors among which the role of the factor - "political risk", is of great importance. The possibility of political, economic and social instability will make the potential investments unprofitable because the risk of investment loss and devaluation is too high.

The RA is perceived as a country of risk, including political. The structure of the political risk of the RA was assessed by a number of rating agencies, large financial institutions and independent analysts and some changes have been revealed. Corruption, protectionism, the rules of the game, the degree of the impact of policies on the economy, bureaucracy, geopolitical problems, etc, are among the political risks in Armenia. Nevertheless, political risks, by themselves, not always "threaten" investors. There is a set of tools to effectively manage them, but only if the rules of the game are rationally defined. A system of analysis and management of political risks must be created in the RA and further steps towards the investment environment should be taken.

Key words: *investments, political risk, political risk management, investment image/investment rating/, risks of globalization, state image /state rating/, investment attraction, investment environment, risk level.*